

ուժեղ պատասխան է բոլոր այս յաւակնութիւններին ու գեղարուհասական մոլորութիւններին։»

Այսպէս ուրեմն Մետերիսկան դրական ու փիլիսոփայական աշխարհայցողութիւնները պիտի հանէին գրականութիւնը ստրկական վիճակից, պիտի ազատէին նրան «առարկայական և անաչառ գիտութեան» իշխանութիւնից և պիտի տային նրան գեղարուհստական այն քարձրութիւնն ու անկախութիւնը, որին արժանի է նա։

(Կը շարունակուի)

Սիմէօն Յակոբեան

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆ*)

I

Իշխանութեան ստիպողական գործառնութիւնը կամ ֆունկցիան, որի ամենախիստ արտայայտութիւնն է պատիժը—պէտք է մանրազննին երաշխիքներ ունենայ, որպէսզի ծառայի միայն և եթ իրաւոնքին։

Երբ կառավարութիւնը քաղաքացուն մեղադրում է քրէական որևէ գործողութեան մէջ, երբ քաղաքացուն օրինակարգի պահպանութեան տեսակէտով սպանում են ծանր պատասխանաւութիւններով, երբ այդպիսով վէճ է ծագում քաղաքացու և տէրութեան մէջ,—ո՞վ և ի՞նչպէս պէտք է վճռի այդ սուր և վերին աստիճանի կարևոր հարցը։ Անհրաժեշտ են երաշխիքներ, որպէսզի մեղադրուածի մէջ յարգուի անձնաւորութիւնը, անհրաժեշտ է որ այդ անձնաւորութիւնը ճանաչուի վիճող կողմ, որը վայելում է նոյն իրաւունքները, ինչպէս և նրա հակառակ կողմը՝ այսինքն կառավարութիւնը։ Պէտք է երաշխիք լինի որ այդ վէճը կը լուծուի անաչառ երրորդ կողմից, որ միանգամայն ծեռնիաս է այդպիսի պատասխանատու նպատակ ստանձնելու համար։

*) Օգտուել ենք պրիվ.-դոց. Բ. Վ. Մինայլովսկու «Հակա. ու գործութեան գործադիր աշխատանքները» («Վ. Փ. և Ա.» 1905)։

Մարդկութեան դարեւոր փորձը՝ այդ վէճը կառավարութեան և քաղաքացու մէջ լուծելու համար՝ ստեղծեց կառավարական իշխանութեան առանձին մի օրգան—լատասատանը։ Պետութիւնը ունի երեք գլխաւոր ֆունկցիաներ. օրէնսդրութիւն, կառավարում (աղմինիստրացիա) և դատաստան։

Այդ երեք ոյժերը պէտք է նպաստեն կուլտուրային։ Աղմինիստրացիայի կամ նեղ մոքով վեցրյած կառավարութեան իշխանութեան գործունէութիւնը ուղղուած է ապահովելու ժողովրդի կուլտուրական զարգացումը, ապահովելու ամենանպաստաւոր պայմանները, որոնք ըստ կարելոյն լիակատար գոհացում են տալիս նրա հոգեկան և նիւթական գոյութեան պահանջներին։ Աւելի պարզ է երկրորդ կուլտուրական ոյժի օրէնսդրութեան գործողութիւնը։ Նա ամենաընդհանուր գծերով միայն ցուցմունքներ է տալիս այն ահազին աշխատանքի ծրագրի մասին, որ պարտաւոր է կատարել աղմինիստրացիան։ օրէնսդրութիւնը միայն ցոյց է տալիս ամբողջ պետական կեանքի ընդհանուր սկզբունքները։ Առաւել ևս պարզ է երրորդ կուլտուրական ոյժի—այսինքն՝ դատաստանի գործունէութիւնը։ Իրաւունքի պաշտպանութիւն—ահա նրա միակ և բացառիկ նպատակը։

Արդ ի՞նչ յատկանիշով է տարբերում դատաստանի գործունէութիւնը, որի նպատակն է իրաւունքի պաշտպանութիւնը, աղմինիստրացիայի գործունէութիւնից, որ ի միջի այլոց ունի նոյն տեսակ նպատակ։ Պրոֆ. Jousserandot դատաստանական իշխանութեան մասին գրած իր գեղեցիկ մոնոգրաֆիայի մէջ ասում է թէ յատկանիշը որով դատաստանական դործունէութիւնը տարբերում է միւսներից կայանում է իրաւունքի վէճի մէջ։ Մինչև չի ծագում այդ վէճը՝ դատաստանը անելիք չունի։ Բայց հէնց որ վէճ է ծագում իրաւունքի մասին՝ մասնաւոր անհատների կամ մասնաւոր անհատների և պետութեան մէջ և որևէ մէկ կողմը պնդում է թէ իր իրաւունքները խախտուած են,—այն ժամանակ բեմ է դուրս գալիս, այդ վէճը վերջնականապէս և հեղինակաւոր կերպով լուծելու համար դատաստանը։

Jousserandot-ն աղմինիստրատիւ արդարադատութիւնը (իւստիցիա) անուանում է իրաւաբանական անհեթեթութիւն, որովհետև այդ դիպուածում իրաւունքի մասին վէճը դատաստանի իրաւասութիւնից հանւում է, վէճի առարկայի առանձնայիստուկ բովանդակութեան պատրուակով։ Մինչեռ դատաստանի և աղմինիստրացիայի գործունէութիւնները տարբերող յատկանիշը առանձնայատուկ բովանդակութիւնն չէ կազմում, այլ վէճը, Այդպիսով աղմի-

նիստրացիան դատաւոր է դառնում իր սեփական գործի մէջ։ անհատների իրաւունքների նկատմամբ աւելի վաանգաւոր բան քան այդ չի կարող լինել։

Կայ մի այլ կարևոր մոմենտ էլ, որ անհրաժեշտ է դարձնում դատաստանական իշխանութեան գոյութիւնը և որոշակի սահման է դնում դատաստանի և ադմինիստրացիայի գործունէութիւնների մէջ։ Այդ մոմենտը կայանում է իշխանութեան ստիպողական գործառնութեան (ֆունկցիա) կարգադրելու մէջ։ Միայն դատաստանը իրաւունք ունի կարգադրելու այդ ֆունկցիաներով։ Դատաստանի ծեռում այդպիսով կենտրոնանում է ոյժի գործադրելու մենաշնորհը, ոյժի, որ պէտք է ծառայի իրաւունքին։

Այդ բանին բոլորովին չի հակաճառում ոստիկանութեան գործունէութիւնը որոշ դէպքերում։ Դատաստանական ստիպողականութեան մենաշնորհի սկզբունքը չի նշանակում, որ եթէ օրինակ, ոստիկանը նկատում է աւազակին, որ ուզում է մորթել մարդուն, պէտք է նախ գնայ դատաւորի մօտ և ստանայ հրաման կալանաւորելու աւազակին։ Խնդըստինքեան հասկանալի է որ ոստիկանութիւնը պէտք է ունենայ իրաւունք նաև ստիպողական միջոցներ գործադրելու յանցանքի առաջն առնելու համար։ Սակայն նախ՝ որ այդ բոլոր միջոցները պէտք է հասցրած լինեն նուազական չափերի և գործադրուեն միայն ծայրայեղ անհրաժեշտութեան սահմաններում և պէտք է պայմանաւորուած լինեն մի շարք երաշխիքներով։ Երկրորդ՝ և այդ ամենագլխաւորն է—այդ բոլոր միջոցները պէտք է ենթարկուեն դատաստանական վերահասուլթեան (կոնտրոլի)։ Այդ պիտով նրանց վերջնական հաստատումը կախուած է դատաստանից, որպէս իշխանութեան միակ օրգանից, որ լիազորութիւն ունի կարգադրելու օրինակարգի պահպանութիւնը ստիպողական միջոցներով։ Իրբև կասիկ օրինակ-թէ ինչպէս կարելի է հաշտեցնել դատաստանի ստիպողականութեան մեկարելի է հաշտեցնել դատաստանի ստիպողականութեան լայն լիազօրութիւնների հետ՝ ծառայում է անգլիական Habeas Corpus Actը լրացուցիչ կանոններով, որոնոցով իրաքանչիւր պաշտօնեայ պատասխանատու է դատաստանի առջև քաղաքացու իրաւունքի ամեն մի լիախտման համար։ «Եթէ ներքին գործերի մինիստրը —ասում է հոչակաւոր Դայսին,—ապօրէն կերպով ձերբակալէր մէկին, ձերբակալութեան աղմինիստրատիւ բնոյթը, քաղաքական նկատողութիւնները, մինիստրների դիրքը չէին արդարացնիլ դատաստանի առջև նրան, ինչպէս և այն ոստիկաններին, որոնք կատարել էին մինիստրի հրամանը», բացի այն որ ա-

պօրէն կալանաւորուածը *Habeas Corpus* ձշ-ի զօրութեամբ
անյապաղ ազատուած կը լինէր դատաստանի կարգադրու-
թեամբ:

Աղմինիստրատիւ պատիժները անընդունելի են իրաւաբա-
նական գիտութիւնից. ևամեն մի բան որ քաղաքացուն պատճա-
ռումէ տանջանք ֆիզիկական կամ բարոյական, —ասում է պրոֆ.
Ա. Կիստեսկովսկիյ. — ամեն մինեղում կամ ազատութեան սահմա-
նափակում, որոշ վայրում ապրելու ամեն տեսակ արգելքները,
քաղաքից գիշելից կամ այլ տեղից չհետանալու հրամանը, ոստի-
կանութեան հսկողութեան յանձնելը, կշտամբանքը, նկատողու-
թիւնը կամ նախազգուշացումը—այդ բոլորը ըստ էութեան լի-
նելով պատիժներ, ըրէական իրաւունքի հիմունքներից բացի
ինչ հիմունքներ էլ է դնելու լինեն՝ կարող են որոշուել միայն
և միայն դատաստանով, և ոչ ոքից, եթէ ոչ միայն դատաստա-
նից»:

Աղմինիստրատիւ իշխանութեան պէտք է տրուի բաւա-
կանաչափ ազատութիւն հասարակական կարգը պահպանելու և
այն միջոցները գործադրելու համար, որոնք պահանջւում են
պետութեան և հասարակութեան միահամուռ շահերով, սակայն
երբ աղմինիստրատիւ իշխանութիւնը ընդհարուում է քաղա-
քացիների իրաւունքների հետ, նա պէտք է դիմէ դատաստանի-
օգնութեան Եւ իրանց կողմից էլ քաղաքացիները պէտք է ի-
րաւունք ունենան դիմելու դատաստանի պաշտպանութեան-
ճնշումների դէպքում. այլապէս նրանք զոհւում են աղմինիստրա-
տիւ կամայականութեան:

Աղմինիստրատիւ պատիժների սիստեմը կարող է գոյու-
թիւն ունենալ պետական կեանքի զարգացման միայն ստորա-
գոյն աստիճանների վրայ, երբ անձնաւորութիւնը դեռ շատ-
ցած է գնահատուում, երբ ամեն ինչ զոհւում է իշխանութիւնը
ուժեղացնելու սիստեմ հասկացած սկզբունքին: Աղմինիստրա-
ցիային տալ իրաւունք պատժելու քաղաքացիներին, այսինքն
տալ նրան դատաստանական կարեւոր ֆունկցիաներ՝ համահա-
ւասար է դատաստանի աւելորդութիւնը խոստովանելուն, իսկ
այդպիսի խոստովանութիւն ստեղծում է իշխանութեան անսահ-
ման կամայականութիւն իր բոլոր ցաւալի երևոյթներով. բոլոր
հասարակական յարաբերութիւնները դառնում են երերուն,
անորոշ, ոչ ոք չի կարող վստահ լինել վաղուայ մասին, կոր-
ցնուում է օրինակութեան զգացմունքը, զարգանում են ստորացում
և սորկական բնազդներ, բարեբեր վայրանանուա են, բոլորը
սովորում են ապրել միայն ներկայով, չգարշելով ոչ մի միջո-
ցից՝ ուժեղների բարեացակամութիւնը գրաւելու համար, իդէա-

լական շահերը, մարդկային արժանապատռութիւնը դառնում են դատարկ հնչիւններ, իսկ պետութիւնը դառնում է մի չարիք: «Դատաստանը ասում, է իներինգ, սկզբունքով պետական իշխանութեան ինքնասահմանափակում է, որ ծառայում է միայն այդ նոյն իշխանութեան ամրանալուն և նրա բարոյական արժանաւորութեան բարձրանալուն»:

Միայն դատաստանի գոյութեամբ կարող են լիակատար վստահութեամբ և յարգանքով վերաբերուել դէպի կառավարութիւնը, միայն դատաստանի գոյութեամբ այնպիսի ահռելի զէնք՝ ինչպիսին պատիժն է, անվտանգ կը լինի անձի ազատութեան համար: Քաղաքացիները պէտք է վստահ լինեն որ եթէ գործը դատաստան ընկաւ ոչ մի ազդեցութիւն ոչ վերեկից, ոչ ներքեկից, հասարակական կամ պետական օգտին ոչ մի պատճառաբանութիւն ոչ մի նշանակութիւն չեն կարող ունենալ գործը այս կամ այն կողմ վճռելու համար: Նա պէտք է հաւատացած լինի որ դատաւորների համար միակ և բացառիկ ֆակտորները կարող են լինել «օրէնքը, խիզնը և փաստերը». Նա պէտք է համոզուած լինի որ ի նկատի առնուած կը լինեն բոլոր երաշխիքները, որոնք ապահովում են ճշմարտութիւնը երևան հանելու: Իսկ այդ բոլոր պայմանների իրականացման համար անհրաժեշտ է ապահովել դատաւորների անկախութիւնը որևէ ազդեցութիւնից վերևից թէ ներքեկից եկած: Դատաւորների առաջին և անհրաժեշտ յատկութիւնն է անաշառութիւնը, իսկ այդ հասրաւոր է միայն այն ժամանակ երբ նա լիակատար կերպով անկալի է ինչպէս վիճող կողմերից, այնպէս և իշխանութիւնից, որ պահպանում է հասարակական կարգը և հալածում նրա խանգարողներին,

Դատաստորը ենթառկուտմ է միայն անձնագուրկ օրէնքին և ինքը հանդիսանում է նրա առաջին պաշտպանը. սակայն որովհետև օրէնքի կիրառութիւնը տրուած դէպքի նկատմամբ միշտ անհատական բնոյթ ունի, ուստի դատավճիռը պէտք է լինի անձնական ներքին համոզմունքի արդիւնք: Ոչ մի իշխանութիւն իրաւունք չունի հրամանագրելու դատավճիռ, նըման այն բանի, ինչպէս հրամանագրում է ստորին աղմինիստրատիւ օրգաններին այս կամ այն կերպ գործելու մալիս:

Այստեղից հասկանալի է թէ որ աստիճան կարևոր է դատաստանի կազմակերպութեան հարցը, Միայն այդ կազմակերպութիւնը կարող է տալ դատաստան, որ բարձր կը լինի կանգնած բոլոր կուսակցութիւններից, բոլոր կրքերից թէ կառավարողների և թէ կառավարուղների: Դատաստանը, ինչպէս Զիշերինն է ասում, պէտք է լինի արդարադատութեան

բարձրագոյն օրգանը: Միայն դատաստանի կազմակերպութիւնը կարող է յատկացնել նրան բոլոր միջոցները նրա բարդ գժուար ու պատասխանատու նպատակին աջողութեամբ հասնելու համար:

Սակայն որքէսզի այդպիսի դատաստանական իշխանութիւն կանգնած լինի իր բարձրութեան վրայ անհրաժեշտ են նաև շատ պայմաններ, որոնք վերաբերում են դատաւորի իրա անձնաւորութեան, որովհետև ինքնինզի խորիմաստ նկատողութեան համաձայն արդարադատութեան աջողութիւնը վերջ ի վերջոյ կախուած է միանգամայն դատաւորի անձնաւորութիւնից: Դատաւորը պէտք է ունենայ կատարեալ գիտական հըմառութիւն, փորձ և բարոյական յատկութիւններ, պէտք է գիտակցի որ արդարադատութեան գործադրութիւնը իր տեսակի մէջ մի սրբազն արարողութիւն է, որին անկարելի է մօտենալ չլուացուած ձեռներով: Միայն այն ժամանակ դատաստանը ի չար չի գործ գնիլ իր ահազին իշխանութիւնը, միայն այն ժամանակ նա կը լինի բոլոր ժողովրդի աչքում արդարադատութեան բարձրագոյն օրգանը:

II

Սակայն դեռ բաւական չէ ստեղծել անկախ, գիտութեամբ, փորձով և բարոյական յատկութիւններով զինուած գործելու ամենայարժար պայմաններում դրուած դատաստան: Եթէ միայն բաւականայինք նրանով ինչ որ կարող է տալ միայն դատաստանի կազմութիւնը՝ միայն գործի կէսը արուած կը լինէր: Որքան և կարևոր է կազմակերպումը, սական մենակ նա բաւական չէ որ դատաստանը կանգնած լինի իր այդքան պատասխանատու նպատակի բարձրութեան վրայ:

Անհրաժեշտ է հանդիսանում դատաստանական գործունէութիւնը ենթարկել որոշ կանոնների և որոշ երաշխիքներով պայմանաւորել: Հէնց այդպիսի երաշխիքներ են դատավարութեան արարողութիւններն ու ձևերը, որոնք դատաստանական գործողութիւններին տալիս են որոշ ծանրակշռութիւն, նոյնիսկ դանդաղարժութիւն, սակամն միաժամանակ միայն դրանց շնորհիւ դատաստանը կարող է ազատ լինել որևէ կասկածից: Եթէ դատաստանական գործունէութիւնը զրկել ձևերից և արարողութիւններից (Փօրմ և օքրածօք), այդ գործունէութիւնը ոչընչով չի տարբերուի վարչական մարմինների գործունէութիւնը ոչընչով կը տոգորուի նպատակայարմարութեան այն ըսկըզբունքով, որ այնքան կարևոր է աղմինիստրացիայի կամ վարչու-

թեան մէջ և այս աստիճան հակասում է արդարադատութեան գործադրութեան:

Դատաստանական գործադրութեան ձևերն ու արարողութիւնները ստեղծում և մշակում են կուլտուրայի զարգացման հետ զուգընթացքար, կուլտուրայի առաջխաղաց ընթացքի հետ միասին մշակում են աւելի և աւելի կատարեալ, արդար և նպատակայարմար դատավարութեան ձևեր և արարողութիւններ: Զի կարելի ցոյց տալ սահման այդ շարժման, գիտութիւնը դանդաղ, սակայն անշեղ առաջ է գնում և պէտք է գտնի աւելի և աւելի արդար և կատարեալ, անձնական ազգեցութիւններից աւելի ազատ միջոցներ՝ քրէական պրոցեսսի վերջնական նպատակին հասնելու համար: Քրէական պրոցեսսի գիտութիւնը իր երկու բաժիններում—դատակազմութեան և դատավարութեան—ձգտում է սաեղծել երաշխիքների ամենապլիատորը՝ որ ապահովում է ոյժի կերպարանափոխութիւլը իրաւունքի:

Պէտք է չմուանալ որ իրաւաբանական գիտութիւնը, ինչպէս և ամեն մի գիտութիւն, սիայն այս ժամանակ կարող է կանգնած լինել իր նպատակների բարձրութեան վրայ, երբ նաև կորցնում կապը փիլիսոփայութեան հետ, առանց որի անկարելի է մշակել ամբողջացրած և ուղիղ աշխարհայեացք: Ճիշտ է ասում Զիշերինը. «Որքան էլ մենք ուսումնասիրենք ժողովրդական տնտեսութիւնը, իրաւունքը և պետութիւնը իրանց արտայայտութիւնների մէջ, մենք դրանից դեռ չենք հասկանալ՝ արդեօք համապատասխանում են այդ արտայայտութիւնները արդարութեան և բարիքի այն ամենաբարձր սկզբունքներին, ուրոնք ընկած են մարդու հոգու մէջ, որոնք նա ձգտում է իրագործել իր կեանքում: Այդ սկզբունքները կարող են պարզուել միայն փիլիսոփայութեան շնորհիւ, որ այդ պատճառով դառնում է բոլոր հասարակական յարաբերութիւնների վեհագոյն չափը»: —Անձի բացարձակ արժէքը և նրա ազատութիւնը—ահա իրաւունքի հիմնական իդէալական սկզբունքը, որ բղխում է կանտի փիլիսոփայութիւնից: ¹⁾

S.

1) Համեմատիր այս համարի «Պարբեր» հր., բաժանմունքում սոցիալիզմի մասին գրուածքը Հարկ ենք համարում ասել մեր ընթերցողներին որ այս ամբողջ յօդուածը առաջ բերելու շարժառիթը այն էր որ թիւք-հայկական համագումարում ադմինիստրացիայի և դատաստանի մասին եղած վիճաբանութեան ժամանակ և ոչ մի կողմի հետ համակարծեք շլնելով